ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 216/32 «_» 28 08 11 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 51-րդ, ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 2-րդ, 6-րդ ու 7-րդ կետերը՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի կազմից աշխատանքից ազատման հիմքով հանել ընտրովի անդամ, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Լիպարիտ Տեփոյանին, լիազորությունների ժամկետի ավարտման հիմքով՝ հրավիրյալ անդամ, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Վահան Ավետիսյանին, սովորողի կարգավիճակի դադարեցման հիմքով՝ սովորող անդամներ Սերգեյ Փարսյանին, Տիգրան Չթչյանին, Հայկ Հովհաննիսյանին, Աննա Սարգսյանին:

2. ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում որպես ընտրովի անդամ հաստատել՝ Մաթեմատիկայի և կիրառական հետազոտությունների կենտրոնի մեքենայական ուսուցման լաբորատորիայի վարիչ Աշոտ Հարությունյանին, որպես հրավիրյալ անդամ՝ ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն Լիլիթ Դաշտոյանին: Ըստ ֆակուլտետի ուսանողական խորհրդի որոշման՝ գիտական խորհրդի կազմում որպես սովորող անդամներ հաստատել քվեարկությամբ ընտրված հետևյալ ուսանողներին.

Ալիսա Թանյան – ասպիրանտ,
Արևիկ Առուշանյան – մագ. առաջին կուրսի ուսանողուհի,
Էդգար Հողմրցյան – բակ. 4-րդ կուրսի ուսանող,

Լիլիթ Պողոսյան – բակ. 4-րդ կուրսի ուսանողուհի:

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ գիտական քարտուղարին, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետին ու խորհրդի անդամներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հիմք՝ ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Սահակյանի զեկուցագիրը (22.10.2024 թ.):

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ